Հովհաննես Թումանյան

Parodia

Հովհ. Հովհաննիսյանի «Իմ հայրենիքը
տեսե՞լ ես, ասա՛» բանաստեղծության

«Իմ հայրենիքը տեսե՞լ ես, ասա՛...»

Տեսե՞լ ես արդյոք այն բլուրները,
Ուր ճոխ ծաղկում է մշտական գարուն,
Ուր թալանում են մերոնք ու այլերը,

Ուր հոսում է միշտ արցունք ու արյուն:

Տեսե՞լ ես արդյոք այն այգիները,
Ուր իբրև գոհար խաղողն է հասնում,
Որից դատարկ են նըստում տերերը,
Որ միշտ ցեցերի գըրպանն է լըցնում:

Տեսե՞լ ես ծերուկ ժայռերի միջով
Կատղած անցնելիս գետը փըրփըրած.
Վախե՞լ ես անցնել կոտրած կամուրջով,
Նստե՞լ ես արդյոք ափին մոլորված:

Տեսե՞լ ես գյուղը հովտի մեջ մենակ

Ու շուրջը փրոված հին աղբակույտեր.
Տեսե՞լ ես ո՛նց էն այնտեղ շարունակ
Կրովում, կեղեքում քյոխվեն ու տերտեր:

Եվ դու տեսե՞լ ես նրա գանձն անգին,
Հարավի դուստրը խրոճուկ արարած,

Լռության կնիքն իրեն շրրթունքին
Ու ինքը ամբողջ կեղտի մեջ կորած:

Տեսե՞լ ես նորա եպիսկոպոսին
Դեմքին գոհության տափակ կնիքը.
Գիտե՞ս ինչ զարդ է թաղման հանդեսին,

Եվ կամ ի՞նչ արժե մատի մատնիքը:

Եվ դու տեսե՞լ ես նորա գազեթը,
Որ ազատ միտք է վաճառում հային.
Զգո՛ւյշ բարեկամ, չրվիճես հետը,
Թե չէ՝ կրմատնի քեզ պոլիցիային...

«Իմ հայրենիքը տեսե՞լ ես, ասա՛...»

1910